

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային միջոցների շուկաներին ներկայացվող ընդհանուր պահանջները:

2. Սույն պահանջները տարածվում են Հայաստանի Հանրապետությունում ավտոտրանսպորտային միջոցների շուկաների գործունեություն իրականացնողների վրա, որոնք ունեն «Գործունեության ծանուցման մասին» օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք:

II. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի գործունեությունը կազմակերպում է շուկայի համար հատկացված տարածքը/շինությունը նպատակային նշանակությամբ օգտագործելու իրավունք և պարտավորություն ունեցող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ կազմակերպիչ):

4. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի կառուցապատումն իրականացվում է «Քաղաքաշինության մասին» օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան շինարարության թույլտվության հիման վրա:

5. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի ընդհանուր տարածքի մակերեսը պետք է լինի առնվազն 50000 քառ. մետր՝ ներառյալ շենք-շինությունները: Ընդ որում՝

ավտոտրանսպորտային միջոցների առուվաճառքի ավտոկայանատեղիների մակերեսները հաշվարկվում են մեկ մեքենայի համար նախատեսվող նորմատիվային միջինացված մակերեսի հաշվառմամբ, տարբեր մակնիշի ավտոմոբիլների տեխնիկական առանձնահատկություններին համապատասխան՝ ըստ հատկացված տարածքի:

6. Համայնքների (քնակավայրերի) տարածքներում տեղակայված ավտոտրանսպորտային միջոցների առուվաճառքի համար նախատեսված շուկայի տարածքը պետք է կազմակերպվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (քնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1920-Ն որոշման, ՀՀՇՆ IV-11.03.03-02 (ՄՄՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր», Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական քնակավայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքների բարեկարգում» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

7. Կազմակերպիչն ապահովում է սույն կարգի 6-րդ, 9-րդ, 10-րդ և 12-րդ կետերով սահմանված պահանջների կատարումը:

8. Ավտոտրանսպորտային միջոցների շուկաները պետք է ապահովված լինեն իրենց հատկացված հողատարածքի սահմաններում գործող ավտոկանգառով, որի մակերեսը չպետք է պակաս լինի, քան ավտոտրանսպորտային միջոցների շուկայի ընդհանուր մակերեսի 10 տոկոսը:

9. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու ուղիները պետք է ունենան ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան գծանշումներ և համապատասխան ճանապարհային նշաններով կահավորում:

10. Հաշմանդամություն ունեցող անձանց համար տարածքի մատչելիությունն ապահովվում է ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

11. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի տարածքը պետք է ունենա տրանսպորտային միջոցների կայանումն ու անվտանգ տեղաշարժը կարգավորող գետնանշումներ:

12. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի տարածքը, հաստատված նախագծային փաստաթղթերի պահանջներին համապատասխան, պետք է համալրված լինի ինժեներական հաղորդակցության ջրամատակարարման, ջրահեռացման (մակերևութային ջրերի հեռացման), ինչպես նաև էլեկտրամատակարարման համակարգերով, շարժական կամ անշարժ սանհանգույցներով, հակահրդեհային ազդանշանման համակարգերով:

13. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի ողջ տարածքի տեսաձևերային վերահսկման նպատակով տարածքը կահավորվում է տեսաձայնագրող տեխնիկական միջոցներով: Տեսաձայնագրությունն արխիվացվում և պահպանվում է առնվազն մեկ ամիս:

14. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի ծառայություններից օգտվողների համար նախատեսված տեղեկատվական/գովազդային ցուցանակները պետք է տեղադրվեն մատչելի և տեսանելի վայրերում:

**III. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

15. Կազմակերպիչն ավտոտրանսպորտային միջոցների առուվաճառքը տեղում կազմակերպելու նպատակով ավտոտրանսպորտային միջոցների շուկայի տարածքում ապահովում է փաստաթղթերի ձևակերպման և վճարումների, այդ թվում՝ օրենքով նախատեսված դեպքերում անկանխիկ իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:

16. Սույն պահանջների 15-րդ կետում սահմանված պայմանների ապահովման նպատակով ավտոտրանսպորտային միջոցների շուկայի տարածքում կարող են տեղակայված լինել ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքեր:

17. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի տարածքում կազմակերպիչը պետք է նախատեսի տարածքներ՝

1) ճանապարհային ոստիկանության հաշվառման ստորաբաժանման համար՝ տրանսպորտային միջոցների պետական հաշվառման գործողությունները կատարելու համար.

2) տրանսպորտային միջոցների ներմուծման և արտահանման գործընթացը կազմակերպող պետական և ոչ պետական մարմինների համար՝ անհրաժեշտ ձևակերպումները տեղում իրականացնելու նպատակով.

3) սննդի, ավտոպահեստամասերի վաճառքի, ավտովագման, տեխնիկական սպասարկման կետերի և տրանսպորտային միջոցների առուվաճառքի հետ կապված այլ ծառայությունների մատուցման, այդ թվում՝ առևտրային բանկերի մասնաճյուղերի համար:

18. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի գործունեության հնարավորությունների ընդլայնման և տրանսպորտային միջոցների առուվաճառքի գործընթացը դյուրացնելու նպատակով շուկայի տարածքում կազմակերպչի դիմումի հիման վրա տեղակայվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ստորաբաժանում, իսկ մաքսային գործառնությունները կարող են իրականացվել Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

19. Սույն կարգի 17-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվառման ստորաբաժանման գործունեության կազմակերպման համար նախատեսված անհրաժեշտ գույքի և տեխնիկական միջոցների ապահովումն իրականացնում է կազմակերպիչը:

20. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի տարածքում պետք է տեղակայված լինի կազմակերպչի վարչական ապարատի շենքը:

21. Ավտոտրանսպորտային միջոցների շուկայի կահավորման և գետնանշման աշխատանքներն իրականացվում են կազմակերպչի կողմից իր միջոցների հաշվին:

22. Կազմակերպիչն ավտոտրանսպորտային միջոցների շուկայի գործունեությունը կազմակերպելու համար կարող է ունենալ էլեկտրոնային հարթակ՝ շուկայում վաճառվող ավտոտրանսպորտային միջոցների մասին տեղեկատվությունը տեղակայելու համար:

23. Կազմակերպիչն իր գործունեությունը պետք է իրականացնի «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 3.1-ին, 5-րդ և 7-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ